

--- Քաղաքաշինական բաց հարթակ ---

**«ԶԻՆՁ» ՍՊԸ փոխտնօրեն**

**Հովհաննես Մեսրոպյան**

### **Ավտոմայրուղիների հատումների կանոնակարգի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության Կառավարության N 1025-Ն առ 11.09.2008թ «Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները հաղորդակցուղիներով, ավտոմոբիլային ճանապարհներով, երկաթուղագծերով հատման, օտարման շերտում և (կամ) պաշտպանական գոտում դրանց տեղադրման և վերատեղադրման համաձայնեցման կարգը սահմանելու մասին» որոշումով հաստատված կարգով սահմանվում են ստորգետնյա կոմունիկացիաների նախագծման փուլում ավտոմոբիլային ճանապարհների հատումներին վերաբերվող պահանջները:

Կարգի 10-րդ կետում սահմանվում է.

10. Դիմողը ճանապարհը տնօրինողի կողմից տրված եզրակացության և տեխնիկական պայմանների հիման վրա մշակված ու փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերը ներկայացնում է ճանապարհը տնօրինողին՝ համաձայնեցման:

«Փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերը» պատվիրատուից բացի մեկ այլ մարմնի հետ համաձայնեցման դրույթը հակասում է գործող նորմերին:

Առաջարկում ենք կարգում «փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերը» արտահայտությունը խմբագրել հետևյալ տեքստով «մինչև նախագծային փաստաթղթերը փորձաքննության ներկայացնելը»: